

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՍԱՆՆԱՃՅՈՒՂ

Ա Կ Ո Ւ Ն Ք

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 1(13)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԻ ԽԵՉՈՅԱՆ

Սևրի պայմանագիրը եվ միջազգային քրեական արդարադատության ինստիտուտի զարգացումը..... 282

ЛУСИНЕ ВАРДАНЯН

Некоторые правовые проблемы эвтаназии..... 289

ԷՂԳԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հայաստանի առաջին հանրապետության կռալիցին կառավարության փորձից..... 302

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՍԴԱՅԵԼ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Եվրասիական տնտեսական համագործակցության ձեվավորման օրինաչափությունները և զարգացման շրջանները. Նոր եվրասիականացում..... 308

РЕНАТ ЗЕЙНАЛОВ

Глобализация экономики и ее влияние на производственный потенциал предприятия 316

ԱՆՆԱ ՔԱՄԱԼՅԱՆ

Սահմանամերձ գոտու երիտասարդների սթրես-կայունության առանձնահատկությունների հոգեբանական բնութագիրը 322

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ

ԼԻԼԻԹ ՖԼՉՅԱՆ

Տեսողական ընկալման զարգացումը կերպարվեստի պարապմունքներում..... 330

ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏԵՅԱՆ

Կրթական ծառայությունների մատուցման ռազմավարությունը ասպիրանտուրայում..... 335

ԹԱՄԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ուսուցչի ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները..... 338

ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ

Թարգմանության հիմնական տեսակները 343

ТИГРАНУИ АКОПЯН

Сравнительный анализ деятельности основателей детских садов в Армении и России в 19-ом веке 348

NARINE GASPARYAN

The importance of encouragement in the process of learning 353

ANAHITE HOVHANNISSIAN

Comment utiliser un dictionnaire encyclopédique..... 359

ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ

ՆՈՆԱ ԽԱՉԱՏՐՅԱԼ

Բոլոնիայի գործընթացին անդամակցելուց հետո Հայաստանի Հանրապետությունում ակտիվորեն մեկնարկեց բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումների տուրան: Ներկայումս հետբուհական կրթությունը շարունակում է ՀՀ-ում զարգանալ և ընդլայնվել, սակայն այդ գործընթացը կարիք ունի արդեն հաշվի առնելու բարձրագույն կրթական եվրոպական տարածքում գործող չափանիշները և զայցբուրգյան սկզբունքները: Այս առումով, հիմնախնդիր է հանդիսանում կրթական ծառայությունների մատուցման ռազմավարության բարելավումը ասպիրանտուրայում:

Բանալի բառեր. ասպիրանտուրա, դոկտորանտուրա, ակադեմիական կրեդիտներ, որակի ապահովում, ճանապարհային քարտեզ, ռազմավարական կառավարում

ՀՀ բուհերում գործող երրորդ մակարդակի կրթությունը, որն ի դեպ որակավորումների ազգային շրջանակով ներկայացվում է որպես 8-րդ մակարդակ, ներկայումս գտնվում է անցումային փուլում: Լայն իմաստով, ենթադրվում է անցում՝ ավանդական ասպիրանտուրայից դոկտորանտուրա, իսկ գործուն իմաստով, ենթադրվում է զայցբուրգյան հիմնարար սկզբունքների կիրառում դոկտորանտուրայում: Եթե, որոշ առումներով, զայցբուրգյան սկզբունքները արդեն իսկ կիրառվում են ՀՀ համալսարաններում գործող հետբուհական կրթությունում, ապա այդ սկզբունքների նշանակալի մասը դեռևս իրենց գործնական կիրառումը չեն գտել, պայմանավորված մի շարք ակադեմիական, ֆինանսական, կազմակերպչական և տեղեկատվական գործոններով, որոնք խոչընդոտում են կրթական բարեփոխումների հաջող ընթացքին:¹⁰

Չնայած, ՀՀ համալսարաններում ավանդաբար գործում են հետբուհական կրթական կառույցներ, սակայն նրանցում դեռևս իներցիոն ուժով կիրառվում են խորհրդային ասպիրանտուրայի ավանդույթները: Այսպես, դեռևս մասնագիտական կրթական երրորդ մակարդակում գերիշխում է գիտահետազոտական բլոկը, իսկ ուսումնառության բլոկը գտնվում է ձևավորման փուլում: Նախկինում ասպիրանտները կարիք չունեին վաստակելու ակադեմիական կրեդիտներ, և հիմնականում ծանրաբեռնված էին գիտական հետազոտությամբ: Սակայն, ներկայումս ասպիրանտուրայի ուսանողը պարտավոր է հավաքել ակադեմիական կրեդիտներ ոչ միայն գիտահետազոտական՝ այլև կրթական ոլորտից, կանոնավոր հաճախելով դասերի:¹¹

Սակայն դրան զուգահեռ, ասպիրանտուրայում կուտակված ակադեմիական կրեդիտները չեն փոխանցվում, որը խոչընդոտում է հետազոտողների ներհանրապետական և միջազգային համալսարանական շարժունությանը: Ստեղծված իրավիճակում ՀՀ-ում դեռևս չեն ձևավորվում միասնական դոկտորանտու-

¹⁰ Երիցյան Ս., Ճուղուրյան Ա., Մասնագիտական կրթության մարտահրավերները, «Էդիթ Պրինտ», Եր., 2012 թ., էջ 112

¹¹ ՀՀ ԿԳ նախարարի 2010 թ. հուլիսի 21-ի Փ1167-Ն հրաման

րայի ծրագրեր, բացակայում է կրթական ծառայությունների մատուցման բազմա-
զանության շրջանակը, որը Ջալսբուրգյան կարևորագույն սկզբունքներից մեկն
է:¹²

Ավանդույթի ուժով, ասպիրանտուրան սերտ փոխհամագործակցության
մեջ չէ աշխատաշուկայի և տնտեսության ճյուղերի հետ: Մասնագիտական
կրթության երրորդ մակարդակում գտնվող ուսանողները հիմնականում ար-
տադրությունից կտրված են կատարում գիտահետազոտական աշխատանք, և
արդյունքում բուհերում գրեթե բացակայում է արտադրությունից և տնտեսության
ծառայությունների ոլորտից եկող գիտահետազոտական բնույթի պատվերները:
ՀՀ բուհերում ներկայիս գործող ասպիրանտական ծրագրերը, որոնք սերտ փո-
խառնչություն չունեն կիրառական տնտեսության հետ, գրկված են գործատուներ-
ի պատվերներից և մասնավոր ֆինանսական ներհոսքերից: Եվ ստացվում է
այնպես, որ ասպիրանտուրան ՀՀ-ում հիմնականում ֆինանսավորվում է կրթավ-
ճարների հաշվին, ինչը որ բավարար չէ կայուն ֆինանսավորման համար և պա-
հանջում է հետազոտական աշխատանքների ռազմավարական ֆինանսավոր-
ման մոտեցում:

ՀՀ բուհերում գործող ասպիրանտուրայում բացակայում է նաև որակի ա-
պահովման ռազմավարությունը: Դեռևս մշակված չեն մասնագիտական կրթա-
կան չափորոշիչներ, որակի ներքին ապահովման համակարգը հիմնականում
գործում է բակալավրիատում և մագիստրատուրայում՝ շրջանցելով դոկտորան-
տուրան: Իսկ որակի արտաքին ապահովումը դեռևս իրականացվում է միայն հե-
տազոտական թեզի պաշտպանության գծով, ՀՀ բարձրագույն որակավորման
հանձնաժողովի կողմից, որի գործառույթները կարծես պետք է իրականացվեր
ՈԱԱԿ-ի կողմից: Ստացվում է այնպես, որ ԲՈՀ-ը և ՈԱԱԿ-ն կրկնում են մեկը
մյուսին, հստակություն չմտցնելով որակի արտաքին ապահովման մենեջմեն-
թում:

Ասպիրանտուրայում դեռևս կաշկանդված են ակադեմիական ազատու-
թյունները, որը հատկապես ընդգծվում է ատենախոսության թեզի պատրաստ-
ման և պաշտպանության գործընթացում: Թեմաների հաստատման հարցում ամ-
բիոնները չունեն լիարժեք ակադեմիական ազատություն, քանի որ ի վերջո թե-
մաների վերնագրերը հաստատվում են համալսարանների գիտական խորհուրդ-
ներում: Եվ այս պարագայում, ասպիրանտը պարզապես ուսանող է դիտարկ-
վում, և ոչ թե գիտական հետազոտող, որը նույնպես հակասում է զայցբուրգյան
սկզբունքներին:¹³

Բացի այդ, չափազանց ուռճացված է թեզի պաշտպանական գործընթացի
վարչարարությունը, որը ընթանում է վարչարարական բազում բարդություններով:
Ասպիրանտը, նախ իր թեզը պաշտպանում է համալսարանի ամբիոնում, հետո
առաջատար կազմակերպությունում, և ի վերջո՝ մասնագիտական խորհրդում, ի
դեպ, որում ոչ բոլոր պրոֆեսորներն են առնչվում պաշտպանվող թեզի նեղ մաս-
նագիտությանը: Այս եռափուլ պաշտպանական գործընթացով անցնելուց հետո,

¹² BOLOGNA SEMINAR DOCTORAL PROGRAMMES FOR THE EUROPEAN KNOWLEDGE SOCIETY,
Salzburg, 3-5 February 2005, pp.3-5

¹³ Եվրոպական համալսարանների ասոցիացիայի պաշտոնական կայք, <http://www.eua.be/eua-work-and-policy-area/building-the-european-higher-education-area/trends-in-european-higher-education/trends-vi.aspx>

ատենախոսը կարող է ձախողվել հենց ՀՀ ԲՈՀ-ում, որը ընդամենը մեկ փորձագետի կարծիքով կարող է «ջուրը գցել» հաջողված պաշտպանության արդյունքը և նշանակել կրկնական պաշտպանություն:

Այս առումով, անհրաժեշտ ենք համարում կազմելու ասպիրանտական կառավարման գործիք է և կիրառվում է գործող սուբյեկտի որդեգրած տեսլակատեզ, վերաբերի այն գործարարության թե կրթության ոլորտին, ցույց է տալիս այն բի: Իհարկե, այդ ճանապարհն անցնելիս բազում խոչընդոտների կարելի հանդիպումքին հասնելու համար: Բացի այդ, մեկնարկից մինչև վերջնակետ ճանապարհին պետք է ծախսվեն ռեսուրսներ, տրամաբանական հերթականությամբ հիմնվեն հենակետեր և միջանկյալ արդյունքներ, որով երաշխիքներ կստեղծվեն որդեգրած տեսլականի և առաքելության լիարժեք իրացման համար:

Այսպիսով, ճանապարհային քարտեզը, դոկտորանտուրայի կրթության ոլորտում կարող է ժամանակային կտրվածքով համախմբել առկա ռեսուրսների, կրթական արդյունավետ գործընթացի գործիքակազմի շղթայական ձևավորումը, ակնկալվող արդյունքները, որոնք ի վերջո թիրախավորված են զալցբուրգյան սկզբունքներին համահունչ հետբուհական կրթություն ունենալուն: Գործընթացային քարտեզը հնարավոր է ներկայացնել ինչպես գործողությունների հերթականության շարադրանքով, այնպես էլ գրաֆիկական տեսքով:¹⁴ Երկու դեպքում էլ պարզորոշ պետք է երևա, թե ի՞նչ հետազիծ ենք թողնում ընտրված ռազմավարական երթուղու յուրաքանչյուր հատվածում, և ինչպիսի՞ն է տրամաբանական փոփոխականությունը կրթական գործընթացի արդյունքների ձևավորման շխթալում:

Nonna Khachatryan - Стратегия образовательных услуг в аспирантуре. - После вступления в Болонский процесс, Армения активно начала реформы в системе третьего уровня профессионального образования. Послевузовское образование продолжает развиваться и расширяться, но этот процесс должен учитывать уже существующие стандарты и зальцбургские принципы европейского пространства высшего образования. В этой связи, становится важным решение проблемы совершенствования стратегии образовательных услуг в аспирантуре.

Nonna Khachatryan - Educational services providing strategy in PhD. - After joining the Bologna Process in Armenia is actively started reforms the higher education system, which was also regarded to the third-level professional education. At the postgraduate education continues to develop and expand, but the process needs to take account of already existing standards and Salzburg principles of the European Higher Education Area. In this sense, is becoming argment the problem of improvement postgraduate educational services providing strategy.

¹⁴ Hills, J.M., Robertson, G., Walker, R., Adey, M.A., Nixon, I. (2013), Bridging the gap between degree programme curricula and employability through implementation of work-related learning. *Teaching in Higher Education*, 8(2): 211-231.